Գրչագիր

բասէր էր, և եղեն զօրք ողիա պատերազմողք, և Թիւ հանդիսի նոցա ի ձեռն յայելայ որ աշխարհահամար գպիր էր, և ի ձեռն ամեսիայ դատաւորի, և ի ձեռն անանիա երկրորդին արքայի, և ամենայն Թիւ զօրագլխաց տոհմացն զօրացն որ եղանէին ի գործ պատերազմի ԲՌ. և ՋՃ. և ընդ նոսա զօրք պատերազմողք ԳՃՌ. և ԷՃՌ. և հինգ հարիւր այր, որ ի գործ պատերազմի էր ի Թիկունս Թագաւորին ի վերայ Թշնամեաց, և պատրաստէր ողիա արքա ամենայն զօրացն վահանս, և նիզակս, և պատեանս, և աղեղնակապարանս, և պարսատիկս և քարինս, Եւ արար ողիա յերուսաղէմ մեքենայս խորհրդովք իմաստութեամբ, զի լիցին ի վերայ անգեանցն բաղիստս և վէմս մեծամեծս, Եւ լու եղև պատրաստութիւն այն մինչև ի հեռաստան, և բարձրացաւ սիրտ նորա և մեծամտեաց. դարձաւ յապականութիւն անօրինել առաջի տեառն. և եկն եմուտ նա ի տաճարն տեառն մատուցանել խունկս ի վերայ սեղանոյն խնկոց ...

Տպագիր

Եւ եղեն ողիայ զօրք որք առնէին պատերազմ, և ելանէին ի մարտ գունդք. և Թիւն նոցա ի ձեռն յէելի գպրապետի, և մասեայ դատաւորի, և ի ձեռն անանիայի փոխանակի արքայի, ամենայն գունդք ցեղապետիցն զօրաց ի պատերազմին երկու հազար վեց հարիւր, Եւ ընդ նոսա զօր պատերազմող, երեք հարիւր հազար, և եւթն հազար, և հինգ հարիւր. նոքա էին որք առնէին պատերազմ զօրութեամբ մեծաւ օգնական լինելով արքային՝ ի հակառակորդացն, և պատրաստէր նոցա ողիաս ամենայն զօրուն, վահանս և նիզակս և սաղաւարտս և զրահս և աղեղունս և պարսս ի քարինս, Եւ արար յերուսաղէմ մենքենայս արուեստից ճարտարութեան լինել ի վերայ պարսպաց, և ի վերայ անկեանց, ձգել նետս և քարինս մեծամեծս, Եւ լսելի եղև պատրաստութիւն նորա մինչև ի հեռաստան. վասն զի սքանչելի էր նա յօգնել մինչև զօրացաւ, Եւ իբրև զօրացաւ՝ բարձրացաւ սիրտ նորա առ յապականել, և անիրաւեցաւ ի տէր աստուած իւր, և եմուտ ի տաճարն տեառն ծխել խունկսի վերայ սեղանոյ խնկոց....

Ի վերջոյ պարտականութիւն եմ համարում իմ անկեղծ շնորհակալութիւնս յայտնել Ս. Էջմիածնի Միաբան շնորհունակ Գալուստ Ցէր Մկրտչեանին, որ Եւրոպացի և Հայ բանասէրներին արդէն ծանօթ իւր սիրալիր պատրաստակամութեամբ ամեն կերպ աջակցութիւն ցոյց տուեց ինձ Մայր Աթոռի գրչագիրներով զբաղուելուս միջոցին։ Չեմ կարող մոռանալ և ս. Էջմիածնի զբաղարանի հմուտ մատենապետ արժանապատիւ Հ. Սահակ Ամատունուն, որ բազմիցս օգնեց ինձ դիւրացնելով գրչագիրների արտագրութեան գործը։ Սոցա եռանդուն աջակցութեանն եմ պարտական թէ՛ ընդարձակ ընդօրինակութեան և թէ՛ մանաւանդ այն մանրակրկիտ համեմատութիւնների համար, որ կատարել ենք միասին՝ Մնացորդաց նորագիւտ գրքերը տպագիր Աստուածաշնչի հետ բաղդատելիս։

Գր. Խալաթեանց.

8-ն յուլիսի, 1896 թ.
Ս. Էջմիածին.

ՄԻ ՀԱՅՈՒԱԾ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ.

Խորենացու պատմութիւնը եռանդուն ուսումնասիրութեան ու ամենակենդանի հետաքրքրութեան առարկայ է այժմ։ Իբրև մի նոր ապացոյց, թէ այս նշանաւոր գործի մասին նորանոր տեսութիւններ կազմելուց առաջ ինչքան կարևոր է ժողովել, ուսումնասիրել և ի մի ամփոփել մեր մատենագրութեան մէջ գտնուած նորան վերաբերեալ նիւթերը, ձեռագիրների համեմատութեամբ մի վստահելի բնագիր լոյս ընծայել՝ հրատարակում ենք ներկայ հատուածը։ Նա արտատպուած է Մայր Աթոռի մատենադարանի այն նշանաւոր երկաթագիր ձեռագրից (Գէորգ կաթուղիկոսի ժողովածուի էջ. 102), որի մասին մի քանի անգամ արդէն խօսք եղել է Արարատի մէջ։* Նորա վերնագիրն է «Մովսէսի Խորենացւոյ և Անդրէասի», և այնտեղ, ուր ներկայ հատուածը վերջանում է, լուսանցքում նշանակուած «Անդրէասի» խօսքը միայն ցոյց է տալիս, որ նոր հատուածն է սկսուում։ Անդրէասի» ինչպէս և նորա շարունակութիւնը կազմող կայսերաց պատմութեան մասին գրել է արդէն և այդ՝ թէ առհասարակ պատմութեան և թէ

* Տես. Փետրուար 1896. էջ. 96։

մասնաւորապէս Յովհաննայու քննադատութեան համար, մեծ արժէք ունեցող նիւթերը հրատարակելու պատրաստել է Մայր Աթոռի միաբան Գալուստ Տէր Մկրտչեանցը։ Այդ հրատարակութիւնից յետոյ միայն կարելի կլինի նոցա մեր հատուածի հետ ունեցած փոխադարձ առընչութեան մասին խօսել։ Մենք կրաւականանանք միայն ակնարկելով, որ այսպիսի նիւթերի հետ միասին, Ժ. դարու ձեռագրում, Յովհաննայու պատմութեան մի հատուածի գտնուիլն ** ըստ ինքեան առանձին ուշադրութեան արժանի է։ Իսկ որպէս զի գիւրութեամբ նկատելի լինի այս հատուածի սովորական տպագրից ունեցած և նորա թերութիւններն ուղղող տարբերութիւնները, մենք բաւոր համարեցինք երկու օրինակները իրար դիմաց դնել։ Կ. Վ.

** Ինչքան մեզ յայտնի է այս հատուածը ինագոյնն է բոլոր ծանօթ ձեռագիրների մէջ։

Ձեռագիր.

Ադամ նախաստեղծ. սա կեցեալ ամս Մ. ծնանի զԱԹ. եւ եկեաց ամս Զ. մինչեւ ի ՃԼԵ. ամս Մաղաղայեղի։ Սէթ կեցեալ ամս ՄԵ. ծնանի զԵնովս. եւ եկեաց ամս ՉԻ. մինչեւ ի Ի. ամս Ենովքայ։ Սոքա երկուքն յարձանագրութեանցն ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսեպոս, թէպէտև ուրն անյայտ է։

Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած. և ընդէ՞ր արդեօք այս և կամ վասն որո՞յ պատճառանաց նախին է սա ասացեալ կոչելոյն զԱստուած, կամ ո՞րպէս կոչէին իմանի։ Քանզի Ադամ ճշմարտութեամբ աստուածաստեղծն, և սա ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր. այլ յանցուցեալ և ՝ի թագաստեան եղեալ՝ զՈւր են յԱստուծոյ և ոչ յայլմէ ումեքէ հարցանի. սապէս և զվճիռ վարկին ի նորին բերանոյ լսէ։ Իսկ յետոյ և Աբէլ մերձաւոր և ծանօթ Աստուծոյ լեալ՝ պատարագ մատուցանէ և ընկալեալ լինի։ Արդ, սոցա այսպէս ընդունելութիւն և ի ծանօթութիւն Աստուծոյ լինելը՝ էր աղագաւ առաջին սա՞ ասի կոչել զԱստուած, և այս՝ յուսով։ Այդ զայդն վասն սորա ի տեսութեանց ի հրաւիրեալն մեր ուղարկեսցուք տեղի, իսկ որ առ ձեռն պատրաստն է՝ ասասցուք։ Քանզի ի պատուիրանազանցութեան զրտեալ առաջինն ի մարդկանէ, ի դրախտէն և յԱստուծոյ չարութեան աղագաւ, որպէս ասացեալ է, զտանի արտասահմանեալ։ Զկնի և ընդանէգոյնն Աստուծոյ յորդւոցն Ադամայ ի հարազատէն իւրմէ սպանանի յեղբօրէ։ Յետ որոյ ոչ բանի ինչ աստուածայնոյ և ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ՝ ի տարակուսանս և յանյուսութեան ազգ մարդկան համարեալ լինի, այլ և ինքնահաճոյ արդարև գործս, յորոց միջի սա քաջայոյս եղեալ ուղղութեամբ հանդերձ՝ կոչէ զԱստուած։ Իսկ կոչելդ կրկնակի իմանի՝ կամ անուանել որպէս զմոռացեալ, կամ յօդնականութիւն կարդալ։ Արդ անուանելն իրրև զմոռացեալ՝ ոչ է ի դէպ. զի ոչ

Տպագիր. Վենետիկ. 1843 եր. 9.

Ադամ նախաստեղծն. սա կեցեալ ամս երկերիւր և երեսուն, ծնանի զԱԹ. Սէթ կեցեալ ամս երկերիւր և հինգ, ծնանի զԵնովս։ Սորա երկուքն յարձանագրութեանցն ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսեպոս, թէպէտև ուրն անյայտ։ Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած։

Եւ ընդէ՞ր արդեօք այս, և կամ վասն որո՞յ պատճառանաց նախնիս ասացեալ կոչելոյն զԱստուած և կամ ո՞րպէս կոչելն իմանի։ Քանզի է Ադամ ճշմարտապէս աստուածաստեղծ. և սա ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր, այլ և յանցուցեալ և թագաստեան եղեալ, զՈւր են յԱստուծոյ և ոչ յայլմէ ումեքէ հարցանի. սապէս և զվճիռ վարկին ի նորին բերանոյ լսէ։ Իսկ յետոյ և Աբէլ մերձաւոր և ծանօթ Աստուծոյ լեալ, պատարագ մատուցանէ և ընկալեալ լինի։ Արդ, սոցա այսպէս յընդունելութիւն և ի ծանօթութիւն Աստուծոյ լինելը՝ էր աղագաւ սա առաջին ասի կոչել զԱստուած, և այս՝ յուսով։ Արդ զայն վասն սորա ի տեսութեանց ի հրաւիրեալն մեր յուղարկեսցուք տեղի. իսկ որ ի ձեռն պատրաստն է՝ ասասցուք։

Քանզի ի պատուիրանազանցութեան զրտեալ առաջինն ի մարդկանէ, ի դրախտէն և յԱստուծոյ, չարութեան աղագաւ, որպէս ասացեալ է, գտան արտասահմանեալ։ Զկնի և ընտանեգոյնն Աստուծոյ յորդւոցն Ադամայ՝ ի հարազատէն իւրմէ սպանանի յեղբօրէ։ Յետ որոյ ոչ բանի ինչ աստուածայնոյ և ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսանս և յանյուսութիւն ազգ մարդկան հատեալ լինի, այլ և ինքնահաճոյ արդարև գործս. յորոց միջի սա քաջայոյս եղեալ ուղղութեամբ հանդերձ, կոչէ զԱստուած։ Իսկ կոչելդ կրկնակի իմանի. կամ անուանել որպէս զմոռացեալ կամ յօդնականութիւն կարդալ։ Արդ անուանելն իրրև զմոռացեալ՝ ոչ է ի դէպ. զի ոչ

Հեռագիր

նել որպէս մոռացեալ ոչ է ի դէպ, զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն նոցա զԱստուածդ ածէր անունն և կամ զնոյն ինքն, որոյ անունն. և ոչ դարձեալ մահու և թաղման դեռ ևս յԱստուծոյ ստեղծեալն հասեալ էր։ Ապա ուրեմն յօդնականութիւն կոչէ սա զԱստուած։

Սա կեցեալ ամս ՃՂ. Ծնանի զկայինան. եւ եկեաց ամս ՁԺԵ. մինչեւ ի ԺԳ. ամն Մաթուսաղայի։ Կայինան կեցեալ ամ ՃՀ. Ծնանի զՄաղաղայէլ. եւ եկեաց ամն ՁԼՍ. մինչեւ ՁԱ. ամն Ղամեքայ. Մաղաղայէլ կեցեալ ամն ՃԿԵ. Ծնանի զՑարեդ. եւ եկեաց ամն ՁԼ. մինչեւ ի ԽԸ. ամն Նոյի. Յարեդ կեցեալ ամն ՀԿԲ. Ծնանի զԵնովք. եւ եկեաց ամն Պ. մինչեւ ի ՄՁ. ամն Նոյի։ Ենովք կեցեալ ամն ՃԿԵ. Ծնանի զՄաթուսաղայ. եւ եկեաց ամն Մ. մինչեւ ԼԳ. ամն Ղամեքայ, եւ հաճոյ եղեալ Աստուծոյ՝ փոխի։* Սա յետ Ծնանելոյն զՄաթուսաղայ ամաց Մ. արժանի և հաճոյ վարս ստացեալ, որպէս գիտէ որ հաճեցաւն, փոխեալ ասի ի միջոյ ամբարշտաց, զորոյ զպատճառն յետոյ հատուցցուք։ Մաթուսաղայ կեցեալ ամն ՃԿԷ. Ծնանի զՂամեք. եւ եկեաց ամն ՊԲ. մինչեւ Ո. ամն Նոյի, եւ անդէն իսկ առ ջրհեղեղաւն վախճանեցաւ։ Ղամեք կեալ ամն ՃՁԸ. Ծնաւ որդի և անուանեաց զանուն Նոբայ Նոյ. եւ եկեաց ամն ՇԼԵ. մինչեւ ի ՇՂԵ. ամն Նոյի եւ մեռաւ չորիւք ամօք յառաջ քան զՄաթուսաղա հայր իւր։ Վասն Նոյի։

Եւ ընդէ՞ր արդեօք զսա միայն որդւոյդ անուամբ յորջորջեաց, իսկ վասն այլոցն ամենեցուն պարզապար ասաց թէ ծնան, զորմէ ընդդէմ իմն մարգարէանայ հայրն։ Սա՝ ասէ, հանգուսցէ զմեզ ի գործոց և ի տրտմութենէ ձեռաց և յերկրէ, զոր անէծ Տէր Աստուած. որ եղև ոչ հանգիստ, այլ ջնջումն որ ինչ մի անգամ ի վերայ երկրի։ Ինձ թուի հանգուցանելն դադարեցուցանել, իսկ դադարեցուցանելն զամբարշտութիւնս և զչարիս սատակմամբ մարդկան երկրագործաց դարուն երկրորդի։ Քանզի զեղեցկաբար ասաց թէ ի գործոց մերոց, որ է յանօրէնութեանց, և ի տրտմութենէ ձեռաց, որովք կատարեմք զպղծութիւնս։ Բայց արդարեւ հանգչին ըստ այսմ

* Արդեօք այս յաւելուածները հաշուագէտ Անանիա Շիրակացին չէ՞ արել եւ նա ինքը չէ՞ կրել Խորենացու հատուածը իւր գրուածներին։ Պէտք է նկատել, որ այս յաւելուածները ձեռագրի մէջ տարբեր գրով են եւ յատկապէս այս մէկի մէջ եղած կրկնութիւնը աւելի հաւանական է դարձնում ենթադրել, որ նոքա քուն հեղինակինը չեն։

Ցպագիր

բազմութիւն ամաց ընդ մէջ անցեալ, որ ի մոռացումն նոցա զԱստուածդ ածէր անուն, և կամ զնոյն ինքն՝ որոյ անունն, և ոչ դարձեալ մահու և թաղման դեռ ևս ստեղծեալն յԱստուծոյ հասեալ։ Ապա ուրեմն յօդնականութիւն կոչէ սա զԱստուած։

Սա կեցեալ ամս հարիւր և իննսուն, Ծնանի զկայնան. Կայնան կեցեալ ամս հարիւր և եօթանասուն, Ծնանի զՄաղաղիէլ. Մաղաղիէլ կեցեալ ամս հարիւր վաթսուն և հինգ, Ծնանի զՑարեդ. Ցարեդ կեցեալ ամս հարիւր վաթսուն և երկու, Ծնանի զԵնովք. Ենովք կեցեալ ամս հարիւր վաթսուն և հինգ, Ծնանի զՄաթուսաղայ։ Սա յետ Ծնանելոյն զՄաթուսաղայ՝ ամս երկերիւր արժանի և հաճոյ վարս ստացեալ, որպէս գիտէ որ հաճեցաւն, փոխեալ ասի ի միջոյ ամբարշտաց, զորոյ զպատճառն յետոյ հատուցցուք։ Մաթուսաղայ կեցեալ ամս հարիւր վաթսուն և եօթն Ծնանի զՂամեք. Ղամեք կեցեալ ամս հարիւր ութսուն և ութ, Ծնանի որդի, և անուանեաց զանուն Նոբա Նոյ։

Յաղագս Նոյի.

Եւ ընդէ՞ր արդեօք զսա միայն որդւոյ անուամբ յորջորջեաց, իսկ վասն այլոցն ամենեցուն պարզապար ասէ թէ Ծնաւ. զոր ընդդէմ իմն մարգարէանայ հայրն։ Սա՝ ասէ, հանգուսցէ զմեզ ի գործոյ և ի տրտմութենէ ձեռաց, և յերկրէ՝ զոր անէծ տէր Աստուած։ Որ եղև ոչ հանգիստ, այլ ջնջումն որ ինչ միանգամ ի վերայ երկրի։ Ինձ թուի՝ հանգուցանելն դադարեցուցանելն է. իսկ դադարեցուցանելն՝ զամբարշտութիւն և զչարիս, սատակմամբ մարդկան զաշխարհագործաց դարուն երկրորդի։ Քանզի զեղեցկաբար ասաց, թէ ի գործոց մերոց, որ է յանօրէնութեանց. և ի տրտմութենէ ձեռաց, որովք կատարեմք զպղծութիւնս։ Բայց և հանգչին արդարև ըստ այս մարգարէութեան ոչ ամենեքին, այլ կատարեալքն յառաքինութեան ոգիք, յորժամ չարիք որպէս հեղեղաւն ջնջեալ մաքրին, իբրև առ Նոյիւ մոլեալքն ի չարիս։ Իսկ որդւոյ անուամբ մեծարեաց զնա գիր, իբրև զյայտնի

Գրչագիր

մարգարէութեան ոչ ամենեքեան, այլ կատարեալքն յառաքինութեան ոգիք, յորժամ չարիք իրրև հեղեղաւ ջնջեալք մաքրին՝ իբր առ Նոյիւ մոլեալքն ի չարիս։ Իսկ որդւոյդ անուամբ մեծարեաց զնա զիր, իրրև զյայտնի և զնշանաւոր և զարժանի ժառանգ հայրենականացն ժառանգութեան։

Տպագիր

և զնշանաւոր և զարժանաւոր ժառանգ հայրենականացն առաքինութեանց։

ԶՄԵՐՈՒԹ ՊԱՌԱՒՆ, ՈՒՐ ՄԷԿՈՒՃԱՐ ՏՂԱՆ։ *

— Ա՛յ որդի՝ զարուն է՝
Աստուած խրտ բարուն է՝
Ըս տարին արուն է.
Իմալ էնինք՝ իմալ։

— Մա՛մա՝ զարուն լաւ է՝
Սար ու ձոր ծաղիկ է՝
Եզ ու գմէշ ղրլաւ [1] է՝
Ցանենք էլման [2] բան է։

— Ղամաթ [3] չեղնինք աղէկին՝
Մնաց ճիժ՝ [4] ծաղիկ քաղին՝
Դաւար՝ ծաղիկ ուտին՝
Քրտեր յմեն մալ տարին։

— Կը գանգտինք ռամուվին՝ [5]
Զթորկէ՝ դաւար տանին.
Մզի խութ՝ [6] խամաթ ցանին՝
Մեր ճժեր անհաց չմեռնին։

— Լա՛ռ՝ ռամ էնողներ
Կ՝ շինին ուրանց տներ՝
Ընդոնց դարդն է ճժեր՝
Մեր արտ ու ափեր։

— Մա՛մա՝ քրրդեր շուն ին՝
Ընդոնց հետ էլ չգրուցինք՝
Չ՝ սենք Աստուծոյ բարին՝
Զգան կերցուն մեր զարին։

— Էն ցորեն օր կցանինք՝
Մենք միճա՛կ է կուտինք՝
Ուրանց լէ դրրկեց ինք՝
Թաժա հաց կը ճանփինք։

— Մամա՝ ցորեն աղէկ է.
Տէրտէր նշխարք կենէ՝
Պատարագին կցրուէ՝
Թող Աստուած օգնէ։

— Լա՛ռ՝ ընդոնք քուրդ ին՝
Չհաւատան պատարագին՝
Զրմեն կթալնին՝ կտանին՝
Զրսին հայեր խեղճ ին։

— Մա՛մա՝ քրդեր յմալ ին
Պտի մարսի՞ն կերածնին՝
Հար ե՞ք մեր հոգին հանին՝
Մեր ունեցած տանին։

— Մկայ [1] յրմալ [2] է աշխարք՝
Մզի կայ սուրբ հաւատք՝
Բարեխօս սուրբ նշխարք՝
Քրդուն կենէ շան սատակ։

— Մա՛ռէ՝ սուրբ Լուսաւորիչ՝
Շատեր կնքեց՝ հանեց Ջրից՝
Ընդոր սուրբ աղօթքից՝
Կազատինք շուն քրդից։

— Լա՛ռ՝ աղօթք էղնի՝
Աստուած կը խղճա մզի՝
Ցորեն բան կը ցանուի՝
Էրկիր լրծբէ չընկնի։

— Մեր սուրբ ժամ կաղօթինք՝
Ձեղաւ բահով կը ցանինք՝
Հելպեթ [3] ղամաթ մի կքաղինք՝
Մեր ճժեր կը պահինք։

— Խուրբան՝ բահո՞վ փորինք՝
Հարօրով բոլ հերկինք՝
Օր ճրժեր լէ պահինք՝
Էվելին լէ հորինք։

* Վերոյգրեալ ոտանաւորն առած եմ Մանազկերտի Դէրիք գիւղացի Նազար Ս. Սարգսեանէ։ Ս. Հ.

1. Դէր։ 2. Դարձեալ։ 3 Աստուծմէ մարդուն նախապէս յատկացուած մի բան։ 4. Տղայ։ 5. Գթացողին։ 6. Ընտանիքի պաշար։

1. Այժմ։ 2. Այնպէս։ 3. Թերեւս։